ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ *ԵՎ, ՈՒ* ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նունե Խաչատրյան

Բանալի բառեր՝ միավորիչ, համադասական, շաղկապ, բազմագործառույթ, հակադրություն, հավելում, պատճառ, հետևանք, թվարկում, միավորական հարաբերություն, ներհակական հարաբերություն, հավելական հարաբերություն:

Համադասական շաղկապների բազմագործառույթային գործածությունը տարածված է արդի հայերենում: Այդ շաղկապները հանդես են գալիս նախադասության համազոր անդամների, համադաս նախադասությունների, ինչպես նաև խոսքի տարբեր հատվածների ու պարբերությունների շաղկապման դերով՝արտահայտելով տարբեր բնույթի իմաստային հարաբերություններ ու երանգներ:

Մենք կքննենք միավորիչ ***և, ու*** *շաղկապների բազմագործառույթային կիրառությունները բարդ նախադասություններում: Այս շաղկապները, բացի իրենց հիմնական՝ միավորական նշանակությունից, համատեղում են այլ և այլ իմաստներ, ինչը կախված է եղելությունների, նկարագրվող գործողությունների բովանդակությունից, բնույթից:*

Իրենց գործածության հաճախականությամբ աչքի ընկնող և, ու շաղկապներն ունեն կիրառական և ոճական մի շարք առանձնահատկություններ: Ինչպես գիտենք, ***ու*** *շաղկապը գործածվում է ավելի սերտ հարաբերություն արտահայտելու համար, ավելի փոքր միավորներ կապելու համար, իսկ և-ը, ընդհակառակը, կապում է մեծ ծավալի լեզվական միավորներ: «Հասկանալի է, որ* ***ու*** *շաղկապը իր գործածության ոլորտի սահմանափակության պատճառով չունի և չի կարող ունենալ իր համանիշ* ***և*** *շաղկապի բոլոր իմաստային կիրառություններն ու նրբությունները»[1]:*

Եվ, ու *շաղկապներով կապակցված բարդ նախադասությունները կարող են արտահայտել միավորական, ներհակական, հավելական հարաբերություններ՝ տարատեսակ ու բազմազան նրբերանգային իմաստներով: Միավորական հարաբերությամբ նախադասությունները արտահայտում են թվարկում, իմաստային երանգներ՝ ժամանակային, պատճառահետևանքային:*

Եվ, ու շաղկապների թվարկման նշանակությունը շեշտվում է այն ժամանակ, երբ հանդես են գալիս համազոր նախադասությունների կապակցման դերով. «Նա ահաբեկված լռեց, պահեց շունչը ***և*** *լայն բացված աչքերով նայեց անձռնի գնդին» [2]: Թվարկման արտահայտչականությունը սաստկանում է, երբ կապակցման դերով հանդես են գալիս և՛...և՛, ու՛...ու՛ միավորիչ կրկնադիր շաղկապները: Կրկնադիր և՛...և՛ շաղկապն իր գործածության հաճախականությամբ առավել շատ հանդիպում է չափածո խոսքում և հիմնականում ունի ոճական արժեք: Արձակում հանդիպող կիրառությունների մեջ ևս պահպանում է այս նշանակությունը. «Ով ինչ ուզում է ասի, ջահել ծնող է սիրում, այսինքն, որ և՛ ընկեր լիներ ու թուրքերեն, վրացերեն սովորեցներ, և՛ հայր, ու նրանից դու քաշվեիր»[3]:*

Միավորական կառույցների ժամանակային նշանակություն արտահայտող բաղադրիչներում գործողությունները կարող են լինել համաժամանակյա և տարաժամանակյա: Առաջինի դեպքում եղելությունները կատարվում են միաժամանակ, երկրորդի դեպքում՝ հաջորդաբար,տարբեր ժամանակներում: Երկու դեպքում էլ կարևոր նշանա-

կություն ունի բայ-ստորոգյալի եղանակաժամանակային կիրառությունը: Համեմատենք հետևյալ օրինակները. «Մի որոշում էր տանջանքով ծնվում նրա ներսում, տատանվում էր դեռ ու կռվում ինքն իր հետ»[4]: «Խումբը կանաչների միջից ձկներ է գտնում ու հագցնում ուռի ճիպոտին»[5]:Առաջին նախադասության մեջ գործողությունները համաժամանակյա են, երկրորդում՝ տարաժամանակյա:

Այս շաղկապների կիրառության ժամանակ բաղադրիչ նախադասությունների միջև կարող է դրսևորվել պատճառահետևանքային կապ: Այս դեպքում բարդ համադասական նախադասության երկրորդ բաղադրիչի մեջ հաղորդվում է այնպիսի իրողություն, որ պարզապես հետևանք, արդյունք է նախորդ նախադասության կամ նախորդ մասի ստորոգյալի գործողության: Օրինակ՝ «Նա կամաց բաց արեց ննջասենյակի երկփեղկ դուռը, զգուշորեն մի կողմ տարավ ստահակը, տեսավ արքային ու հանգստացավ» [6]:

Համադասության առաջին մասում ստորոգյալը դրսևորվում է հոգեկան ներքին զգացումներ արտահայտող բայերով, իսկ երկրորդ մասում գործածվում է ստորոգյալ,որն արտահայտում է այդ զգացումների, տպավորությունների արդյունքը, ինչպես՝ «Ընդհանրապես Մերուժանի ամեն մի խոսքը նա սրտին մոտ էր ընդունում և զայրանում»[7]:

Պատահում է,որ համադասության առաջին բաղադրիչի մեջ գործածված ստորոգյալը արտահայտում է որևէ վիճակ, դրություն,որն էլ առաջացնում է տարբեր հետևանքներ, օրինակ՝ «Ծառի արանքում քոթոթ էր սատկել, ընկել էր արանքը, երկու կողմի վրա կախվել ու չէր կարողացել դուրս գա»[8]:

*Եվ, ու շաղկապները, բացի իրենց հիմնական գործածություններից, կարող են հանդես գալ նաև կապակցող այլ իմաստներով: Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների միջև արտահայտում են ներհակական, հավելական հարաբերություն: Ներհակական հարաբերությամբ կառույցներում առաջին նախադասությունը արտահայտում է այնպիսի իրողություն, որին հաջորդող բաղադրիչը ոչ թե սպասվող հետևանքային նախադասություն է, այլ ներհակական: Համադաս բաղադրիչները կարող են հակադրվել իրենց բովանդակության որևէ կողմով: Այս դեպքում **և, ու** շաղկապները արտահայտում են ներհակական բայց, սակայն, իսկ, այլ շաղկապների իմաստը: Այսպես. «Քանի-քանի անգամ թշնամու նետից սպանվել էր արքան **ու** քիչ անց դարձյալ հարություն առել»(բայց, սակայն), [9]:*

*Զուգադրվում են գործողություններ, իրողություններ, որոնք հակադրվում են միմյանց: Օր.՝ «Մեկն էլ ալևորիկ, ալեմորուս,Ապա երկրորդը այր էր թխամորուս, **Եվ** երրորդն էլ հուրհեր մի պատանյակ» (իսկ), [10]:*

Համադաս բաղադրիչների միջև ներհակությունը ավելի է շեշտվում, բայց շաղկապի երանգը ավելի է ընդգծվում, երբ վերջին մասում գործածվում է ժխտական խոնարհման բայ. «Հետո գլուխը կռացրեց ու խփեց միայն մեջքին, որպեսզի և ցա՛վը լինի, և կապտո՛ւցք չլինի»[11]:

*Զիջման հակադրությունը ավելի է ընդգծվում հետևյալ նախադասությունում. «Քթիդ վրա ջղայնացիր, քթի՛դ, **և** ոչ աշխարհի», (այլ) [12]:*

Հաճախ կառույցի առաջին եզրում արտահայտված մտքին հաջորդում է անտրամաբանական,առաջինից չբխող նախադասություն: Եվ-ի այսպիսի գործածության ժամանակ խոսքի թեման փոխվում, այլ հարց է առաջ քաշվում: Օրինակ՝ «Շները շարան տվին ու կապեցին բլուրները բլուրներին, լանջերը բլուրներին, հեռու սարալանջի աղվեսը ուրթին, և Ալխոն հանգստանում էր կանգնած»,(իսկ) [13]:

Եվ շաղկապը երբեմն կապակցում է թվարկվող շարքի վերջին նախադասությունը իբրև եզրափակում. «Ներսում շքեղ հարսանիք, տոն կլինի, Ու կմնաս դռանը, քեզ հետ՝ հովը... » [14]:

Հակադրական հարաբերություն արտահայտելիս բարդ նախադասության բաղադրիչներից մեկը կարող է սահմանափակել մյուսի իմաստը. «Սիրելը լավ է, և եթե չեն սիրվում, այդ է վատը» (մամուլ):

Հաճախ նախադասության երկրորդ եզրը ինչ-որ չափով կամ հատկանիշով բացառում է առաջին նախադասության մեջ արտահայտված իրողությունը. «Նա այդ տան տերն է, և տունն այդ քանդում են իր աչքի առաջ»(մամուլ):

Գործողությունը, որը արտահայտված է առաջին բաղադրիչում, երկրորդում չունի իր տրամաբանական շարունակությունը. «Պահակը հայհոյեց ու գնաց, ու արևը մտավ տանիքների հետև» [15]:

Միավորիչ և, ու շաղկապները ձևավորում են նաև հավելական հարաբերությամբ բարդ նախադասություններ: Հավելման իմաստը արտահայտվում է տարբեր նրբերանգներով: Հավելական նախադասությունները բավական տարածված են գեղարվեստական խոսքում և յուրովի ոճական գունավորում են տալիս նրան:

Այսպիսի կապակցությունը ենթադրում է փաստերի ու իրողությունների ավելացում: Հավելական նախադասություններն իրենց ընդհանուր բովանդակությամբ հանդես են գալիս նախորդ համադասը որևէ նոր կողմով լրացնելու, մասամբ նաև՝ հետևության նշանակությամբ: Այսպես՝ «Հավաքված է վիթխարի փորձ այդ տեսության դեմ ու կողմ, և ես ահա ունեմ իմ պատասխանը»[16]:

Հավելական հարաբերությամբ նախադասությունները, իմաստային դաշտով հարելով միավորական նախադասություններին, սակայն, նրանցից էապես տարբերվում են: Այս տարբերությունը դրսևորվում է նախադասությունների կառուցվածքային առանձնահատկության մեջ: Միավորական կապակցությամբ նվազագույն կառույցում ունենում ենք մեկ ենթակա և երկու կամ ավելի ստորոգյալներ, իսկ հավելական կապակցության դեպքում՝ երկու և ավելի ենթականեր ու նրանց հետ կապված ստորոգյալներ: Ինչպես՝ «Կողպեց դուռը, սողնակն էլ գցեց, իջեցրեց վարագույրները և փուլ եկավ բազմոցին» [17], (միավորական): «Երամակը հոսում էր նրա ետևից, իսկ նա փախչում էր երամակից, և ոտքերն սկսեցին նրա տակ բազմապատկվել»[18], (հավելական): Երկրորդ նախադասությունը հավելական է, քանի որ երեք հատկանիշները (հոսում էր, փախչում էր, սկսեցին բազմապատկվել) վերագրված են տարբեր ենթակաների (երամակը, նա, ոտքերը):

*Գործածական են և շաղկապով այնպիսի հավելական կառույցներ, որոնք՝ որպես հետևություն, եզրակացություն, բխում են հիմնական մտքից: Օրինակ՝ «Գիտեմ՝ կորուստ է անդարձ ,անհնար այս սերը, Սիրում եմ քեզ, իմ հանցանք, **ԵՎ** իմ սերը սև է»[19]:*

Մի շարք կառույցներում եվ, ու միավորիչ շաղկապներով կապակցվող մասի մեջ արտահայտված լրացուցիչ հաղորդում, ճշգրտում, դիտողություն կարող են վերաբերել ամբողջ նախորդ ասվածին: Ինչպես՝ «Դառնում Մեսրոպը Նարինջ զամբիկին, որ սարահարթի եզրին կանգնած էր լինում անշարժ, գլուխը բարձր, ականջները սրած, և այդ պահին շատ էր նմանվում դասագրքերի ծիրուն» [20]: Եվ եթե լրացվում է ամբողջ նախադասությունը, ապա հավելվող մասի սկզբում կարող է դրվել որևէ դերանուն (այդ, դա), որը փոխարինում է նախորդ նախադասությանը: Այսպես՝ «Արշակավանը, շնորհիվ իր գերմարդկային ջանքերի, կամաց-կամաց ոտքի էր կանգնում, և այդ մասին մտածելիս ինքնագոհության կամ հատուցում ակնկալելու նշույլ իսկ չերևաց Գնելի դեմքին» [21]:

Եվ, ու միավորիչ շաղկապներով հավելվող մասի մեջ բովանդակող լրացուցիչ հաղորդումը կարող է վերաբերել ոչ թե ամբողջ նախորդ ասվածին, այլ նրա որևէ առանձին անդամին: Այսպես՝ «Կողմերը շարժվեցին դեպի իրենց գյուղերը,բերդակցիները՝ ուրախ տրամադրությամբ, իսկ նորշենցիները՝ տխուր և ամենից շատ ինքը՝ Ֆրանկ Մոսոն» [22] :

*Հավելում, լրացուցիչ հաղորդում, ճշգրտում կատարելու համար հաճախ են և, ու շաղկապները կրկնվում, և այդ կրկնությամբ կարող է ստացվել հավելումների հաջորդական շղթա: Օրինակ՝ «Կինը, **և՛** տեղն էր անպատեհ, **և՛** ամուսինն էր ներկա, **և՛** կիրքն էր կասկածելի, ձեռքը հանեց մեռած ձեռքերի միջից»[23]:*

Բարդ համադասական նախադասության հավելվող մասը կարող է հանդես գալ և որպես նախորդ արտահայտության մտքի շարունակություն, զարգացում. «Ես դա կծախեմ ու կուշտ կլինեմ մինչև ամառ, և ուրիշներին էլ բաժին կտամ» [24]:

*Հավելվող մասը կարող է հանդես գալ որպես նախադասության սկզբում արտահայտված մտքի կրկնություն. «Հացն այդպես ձեռքին՝ իրիկունը նա գալու լաց էր լինելու, կամ գիշերը խոտերի մեջ քնած նրան գտնելու էին **և** հացը ձեռքին նա լաց էր լինելու»[25]:*

*Հաճախ կապակցության երկրորդ բաղադրիչում արտահայտված իրողությունը յուրովի լուսաբանում կամ ճշգրտում է առաջինի, նախորդի բովանդակությունը. «Որովհետև բոլոր բանտարկյալները, վաղ թե ուշ, զրկվում են անցյալի հիշողություններից, **և** դրանով իսկ փրկում իրենց» [26]:*

*Հավելական նախադասությունը կարող է արտահայտել համեմատաբար ոչ էական փաստ, երևույթ. «Ամանը վեր ընկավ կոտրվեց, **և** հազար կոծկիր, այլևս չես կարող ամբողջացնել» [27]:*

Միանալով տարբեր բառերի՝ և շաղկապը կարող է արտահայտել տարբեր իրողություններ: Ժխտական կառուցվածքներում դրա հավելական իմաստը կարող է զուգակցվել կառուցվածքի ընդհանուր ժխտական իմաստին, կարող է գործածվել որևէ մակբայի, շաղկապի, միջանկյալ բառի, կապի հետ: Եվ շաղկապով հավելում-ժխտվում են իրողություններ՝ պայմանավորված հիմնական արտահայտության բովանդակությամբ. «Նա չէր խոսում թուրքերեն, և ոչ էլ ուզում էր նրանք հայերեն խոսեն»[28]:

*Երբեմն կարող են միասնաբար հանդես գալ և՛ ներհակական, և՛ հավելական հարաբերություններ: Օրինակ՝ «Եվ գորշ լույսի մեջ ծառերը կանգնած էին **ու** լուռ սպասում էին ինչ-որ բանի, թե ժամանակն էին լսում, **և** ողորկ բներին խարանված էր Տ նշանը»[29]:*

Այսպիսով՝ և, ու շաղկապներով կապակցված համադասական կառույցները կարող են հանդես գալ տարբեր բաղադրությամբ՝ բազմազան ու բազմաբնույթ հարաբերություններով իրար կապելով թե՛ բարդ նախադասության բաղադրիչներ, թե՛ ամենատարբեր տեսակի առանձին, ինքնուրույն նախադասություններ, խոսքի առանձին հատվածներ ու մասեր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գարեգինյան Գ.,Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 123:
2. Ձեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ, Սովետական գրող հրատ., Երևան, 1977, էջ 154:
3. Պետրոսյան Վ.,Մենավոր ընկուզենի, Սովետական գրող հրատ., Երևան , 1981, էջ 592:
4. Ձեյթունցյան Պ., նշվ. աշխ., էջ 316 :
5. Պետրոսյան Վ.,Մենավոր ընկուզենի, Սովետական գրող հրատ., Երևան , 1981, էջ 287:
6. Ձեյթունցյան Պ., նշվ. աշխ., էջ204:
7. Նույն տեղում, էջ 278:

8. Նույն տեղում, էջ 222:
9. Նույն տեղում, էջ 451:
10. Դավթյան Վ., Ծուխ ծխանի, Երևան,1969,էջ 105:
11. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 37:
12. Զեյթունցյան Պ., նշվ. աշխ., էջ 35:
13. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ72:
14. Մահարի Գ.,Երկերի ժողովածու,,հ.Ա,Երևան,1966,էջ 19:
15. Նույն տեղում, էջ 148:
16. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 320:
17. Մաթևոսյան Հ.,Վիպակներ, Երևան, Նաիրի հրատ., Երևան, 1990, էջ 64:
18. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 254:
19. Մահարի Գ.,Երկերի ժողովածու,,հ.Ա,Երևան,1966, էջ 42:
20. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 255:
21. Զեյթունցյան Պ., նշվ. աշխ., էջ320:
22. Դաշտենց Խ.,Ռանչպարների կանչը,Երևան,1984, էջ 286:
23. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 309:
24. Զեյթունցյան Պ., նշվ. աշխ., էջ 338:
25. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ146:
26. Զեյթունցյան Պ., նշվ. աշխ., էջ510:
27. Մաթևոսյան Հ., նշվ. աշխ., էջ 142:
28. Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 194:
29. Նույն տեղում, էջ 126:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Համադասական *և, ու* շաղկապների բազմագործառույթային կիրառությունները

Նունե Խաչատրյան

Մենք քննում ենք *և, ու* առավել գործածական միավորիչ շաղկապների բազմագործառույթային կիրառություններն արդի հայերենում: Բազմագործառույթ շաղկապները վճռական ու նշանակալից դեր են կատարում բարդ համադասական նախադասության առանձին մասերի կապակցման, բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունների ձևավորման գործում: Այս շաղկապները, բացի իրենց հիմնական իմաստներից, համատեղում են այլ և այլ նշանակություններ, որոնք կախված են եղելությունների, նկարագրվող գործողությունների բովանդակությունից, բնույթից:

РЕЗЮМЕ

Многофункциональное применение сочинительных союзов и [եվ, ու]

Нуне Хачатрян

Ключевые слова: связка, сочинительный союз, многофункциональность, противопоставление, дополнение, причина, последствия, перечисление, объединительная связь, несогласованная связь, дополнительная связь.

Мы исследуем многофункциональные связки և,ու и наиболее частое применение объединительных союзов в современном армянском языке.

Многофункциональные союзы играют решающую и значительную роль в соединении отдельных частей сложносочиненного предложения и в построении семантических отношений.

Эти союзы, помимо своих основных значений, имеют и дополнительные значения, которые зависят от содержания и характера описываемых действий и событий.

SUMMARY

Multifunctional Application of Contractual Conjunction and [Եվ, Ու]

Nune Khachatryan

Key words: ligament, compositional conjunction, multifunctionality, opposition, addition, cause, consequences, enumeration, unifying connection, inconsistent connection, additional connection.

The article deals with the multifunctional conjunctions և, ու and the most frequent use of unions in modern Armenian.

Multifunctional unions play a decisive and significant role in connecting separate parts of a compound sentence and in building semantic relations.

These unions, in addition to their basic meanings, have additional meanings that depend on the content and nature of the described actions and events.